

Հայաստանի Հանրապետությունում Կայունացման և Զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագիր

Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ (ՀՀ ԱՆ ԱՕԻԳ ՊՀ) Հետաքրքրություն ներկայացնելու հրավեր

(Խորհրդատվական ծառայություններ-Անհատ խորհրդատուի ընտրություն)

Վերնագիր: Անհատ խորհրդատու՝ էլեկտրոնային առողջապահական համակարգ տվյալների մուտքագրման վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար

Ծածկագիր: NCDPCP/IC/A-C/020-06

Իրավասություն: Բոլոր խորհրդատուները, որոնք համապատասխանում են նշված պահանջներին

Սկիզբ: Օգոստոսի 10, 2020թ.

Տևողություն: 25 ամսվա ընթացքում 27 մարտ/օր

Տեղակայում: Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզեր

Աշխատանքի նկարագիր: Հայաստանի Հանրապետությունում Կայունացման և Զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված «Կրծքագեղձի քաղցկեղի և կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգի պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) մասնագետների համար» ուղեցույց-գործելակարգով սահմանված տվյալների՝ էլեկտրոնային առողջապահական համակարգ մուտքագրման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ անցկացում

Աշխատանքային պարտականություններ:

- Մշակել հաշվետվողական ձևեր էլեկտրոնային առողջապահական համակարգում ներդնելու համար;
- Մշակել վերապատրաստման դասընթացի ուսումնական պլան;
- Մշակված կրթական ձեռնարկի հիման վրա ստեղծել Power Point պրեզենտացիա՝ վերապատրաստման դասընթացների ժամանակ կիրառելու համար(<https://healthpiu.am/wp-content/uploads/2020/07/Guideline-protocol-converted.pdf>);
- Ըստ սահմանված ժամանակացույցի՝ իրականացնել վերապատրաստման դասընթացներ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի ԱԱՊ օղակի բժիշկների, բուժհաստատությունների օպերատորների և ղեկավար անձնակազմի համար.
 - ✓ բոլոր 3 մարզերում վերապատրաստման դասընթացները նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ 22 խմբում;
 - ✓ յուրաքանչյուր խմբի հետ 1 դասընթաց՝ 6 ակադեմիական ժամ տևողությամբ;

- ✓ յուրաքանչյուր խմբում նախատեսվում է ներառել շուրջ 20 մասնակից;
- Վերապատրաստման դասընթացներից հետո՝ տվյալ բնակավայրում սքրինինգային հետազոտությունների իրականացման ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում առցանց կամ հեռախոսով տրամադրել խորհրդատվություն էլեկտրոնային առողջապահական համակարգում տվյալների մուտքագրման հետ կապված;
- Իրականացնել վերապատրաստման դասընթացի արդյունավետության գնահատում՝ նախապես հաստատված հարցաթերթի միջոցով:

Պահանջվող որակավորում:

- Բարձրագույն տեխնիկական կամ հումանիտար կրթություն;
- Դասավանդման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ;
- Էլեկտրոնային առողջապահության համակարգերի տիրապետման առնվազն 5 տարվա փորձառություն;
- Գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց ունակություններ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Վարձատրություն: Սրցակցային

Դիմելու Գործընթաց: Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք ուղարկել իրենց ինքնակենսագրականները (CV) և ուղեկցող նամակները (cover letter): procurement@healthpiu.am և info@healthpiu.am էլ. փոստերին, վերնագրում հստակ նշելով “Individual Consultant-Trainer (E-health), NCDPCP/IC/A-C/020-06”.

Սկսած: 16 Հուլիս, 2020թ.

Վերջնաժամկետ: 27 Հուլիս, 2020թ.

Կազմակերպության մասին: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ը հիմնադրվել է 1999 թվականին, իսկ պետական հիմնարկի կարգավիճակ է ստացել ՀՀ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 765 որոշման համաձայն: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը և պատասխանատու է առողջապահական ծրագրերի ընդհանուր համակարգման, պլանավորման, կառավարման, վերահսկման, ներառյալ գնումների ու ֆինանսական գործառույթների իրականացման համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <https://healthpiu.am/> վեբ կայք:**